Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անահիտ Ավանեսյան, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար:

2. Գործուղման վայրը և ժամկետները

2026 թվականի հոկտեմբերի 8-10-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բեռլին:

3. Հրավիրող կողմը

Գերմանա-Արևելաեվրոպական առողջապահական ֆորումի կազմակերպիչներ, ինչպես նաև «Siemens Healthineers» ընկերություն:

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Գերմանա-Արևելաեվրոպական առողջապահական ֆորումի» 9-րդ համաժողովին՝ որպես հիմնական զեկուցող և պանելային քննարկման մասնակից, ինչպես նաև հանդիպում «Siemens Healthineers» ընկերության ներկայացուցիչների հետ՝ առողջապահության ոլորտում համագործակցության ընդլայնման և ժամանակակից բժշկական տեխնոլոգիաների ներդրման հարցերի քննարկման նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Հայաստանի առողջապահական համակարգի բարեփոխումները և համընդհանուր առողջության ապահովագրության համակարգի ներդրումը:
- Առողջապահության թվայնացումը, «ArMed» համակարգի զարգացումը և թվային տվյալների փոխգործունակությունը:
- Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումը և կանանց առողջության պահպանումը:
- Առողջապահական համակարգերի դիմակայունության ամրապնդումը և եվրոպական լավագույն փորձի կիրառումը:
- Ժամանակակից բժշկական սարքավորումների ձեռքբերումը, տեխնիկական սպասարկումը և գերմանական գործընկերների հետ համագործակցության զարգացումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- 2026 թվականի հոկտեմբերի 8-ին կայացել է հանդիպում «Siemens Healthineers» ընկերության ներկայացուցիչներ Դանիել Ֆրիշի և Բետինա Ռեսլի հետ: Քննարկվել են ժամանակակից բժշկական սարքավորումների, այդ թվում՝ պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիայի և համակարգչային տոմոգրաֆիայի համակցված (PET/CT), մագնիսառեզոնանսային և համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի ձեռքբերման, տեղադրման և սպասարկման հարցերը,

- 2026 թվականի հոկտեմբերի 9-ին նախարարը մասնակցել է «Գերմանա-Արևելաեվրոպական առողջապահական ֆորումի» 9-րդ համաժողովին՝ որպես հիմնական զեկուցող և նախարարական պանելային քննարկման մասնակից,

- Ելույթի ընթացքում ներկայացվել են Հայաստանի առողջապահական համակարգի բարեփոխումները, համընդհանուր առողջության ապահովագրության ներդրումը, թվային առողջապահության զարգացումը և միջազգային համագործակցության առաջնահերթությունները,

- Պանելային քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել եվրոպական կարգավորումների կիրառմանը, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, կանանց առողջությանը և առողջապահական համակարգերի դիմակայունության ամրապնդմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- «Siemens Healthineers» ընկերության հետ քննարկվել են ժամանակակից բժշկական սարքավորումների մատակարարման և սպասարկման հնարավորությունները:
- Նախանշվել են համագործակցության հուշագրի մշակման և ստորագրման հնարավոր քայլերը:
- Ֆորումի շրջանակներում ընդգծվել է Հայաստանի և Գերմանիայի միջև առողջապահության, թվայնացման և մասնագիտական փորձի փոխանակման ուղղություններով համագործակցության ընդլայնման կարևորությունը:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Գնահատել բժշկական կազմակերպությունների՝ ժամանակակից սարքավորումների կարիքները և սահմանել ձեռքբերման առաջնահերթությունները,
- Շարունակել «Siemens Healthineers» ընկերության հետ համագործակցության հուշագրի մշակման ուղղությամբ աշխատանքները,

- Զարգացնել բժշկական սարքավորումների տեխնիկական սպասարկման և անխափան շահագործման համակարգերը,
- Շարունակել առողջապահության թվայնացման, հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման ծրագրերի զարգացումը,
- Ընդլայնել գերմանական գործընկերների հետ մասնագիտական վերապատրաստման և փորձի փոխանակման հնարավորությունները:

Ակնկալվող արդյունքներն են՝ առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության բարձրացումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը և միջազգային համագործակցության ամրապնդումը:

9. Գործուղման ֆինանսավորում

Անահիտ Ավանեսյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման հետ կապված ծախսերը կիրականացվեն 2026 թվականի ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

Recoverable Signature

X _____

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ստորագրությունը՝ _____

Ամսաթիվը՝ 14.10.2026

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 985-Ա 07.10.2026թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*	Նախարար **Անահիտ Ավանեսյան**
4. Գործուղման վայրը	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն ք. Բեռլին
5. Գործուղման ժամկետները	2026թ.հոկտեմբերի 8-10-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը *(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)*	Գիշերավարձ,օրապահիկ,ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս		0.0
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**402000.0**		**402.0**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 152		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	61648.16		0.0
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	**123296.3**		**123.3**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 129		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52318.82		0.0
	Օրերի քանակը	3		
	Ընդամենը (դրամ)	**156959.46**		**157.0**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**682255.76**		**682.3**

Կուրսը 12.10.2026թ.-ի դրությամբ՝1 EUR 405.58 ՀՀ դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

(ստորագրություն) 12.10.2026թ.